ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- 3728

« 14 » մայիսի 2024թ.

«ՍԻՐՐԱ» ՍՊԸ-ԻՆ՝ Ռ. ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

(էլեկտրոնային փոստի հասցե՝ sirra.sirra@bk.ru)

«Ի ՋԻ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Լ. ՋՈՒԼԱԿՅԱՆԻՆ

(հասցե՝ ք. Երևան Ֆրունզե 13)

Հարգելի՛ մասնակիցներ,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

«ՍԻՐՐԱ» ՍՊԸ

- ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (հրավերի պահանջների համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն Հավելված N 1.3-ի, իսկ եթե մասնակիցը չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ, ապա վերջինիս կողմից ներկայացվում է հայտարարագիր՝ համաձայն Հավելված N 1.2-ի), ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չեն 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, ֆիրմային անվանումը, մոդելը, արտադրողի անվանումը:

«Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ

- «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չեն 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, ֆիրմային անվանումները, մոդելները, արտադրողների անվանումները,

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության վերջին նախադասությունում սխալ է նշված մասնակցի անվանումը («Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի փոխարեն նշված է «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ):

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **մայիսի 15-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788